

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/5

22 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Աբրահամ Մեղրիկյանի 26.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 12.02.2016թ-ի թիվ 312741/02 որոշման դեմ:

Ա/Ձ Աբրահամ Մեղրիկյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 12.02.2016թ-ի թիվ 312741/02 որոշման համաձայն Ա/Ձ Աբրահամ Մեղրիկյանը տուգանվել է 20.000 դրամի չափով, որի հետ համաձայն չէ:

Ա/Ձ Աբրահամ Մեղրիկյանը հայտնում է, որ 2015թ-ի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկը ներկայացրել է 2015թ-ի դեկտեմբերի 19-ին: Հաշվետվության մեջ թույլ է տրվել վրիպակ՝ 2015թ-ի փոխարեն նշվել է 2014թ-ը:

Ա/Ձ Աբրահամ Մեղրիկյանը նշում է, որ 2014թ-ին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված չի եղել և այդ կարգավիճակում գործունեությունը փաստացի սկսել է 2015թ-ի մարտ ամսից:

Նոր հաշվետվությունն իր կողմից ներկայացվել է 2015թ-ի դեկտեմբեր 22-ին, իսկ 2014թ-ի նոյեմբեր ամսվա հաշվետվությունը (որը գոյություն չունի) զրոյացվել է ճշգրտված հաշվարկ ներկայացնելով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Աբրահամ Մեղրիկյանը խնդրում է բավարարել իր գանգատը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 03.12.2016թ-ի թիվ 573 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Աբրահամ Մեղրիկյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ-ի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 12.02.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 312741/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Աբրահամ Մեղրիկյանին վարչական պատասխանատվության ենթարկելու և 20.000 դրամի չափով տուգանելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Աբրահամ Մեղրիկյանի կողմից 2015թ-ի դեկտեմբերի 19-ին ներկայացվել է 2015թ-ի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկը: Սակայն, նշված հաշվարկում տեղ է գտել վրիպակ՝ 2015թ-ի փոխարեն նշվել է 2014թ-ը: Տեղեկանալով տեղի ունեցած վրիպակի մասին Ա/Ձ Աբրահամ Մեղրիկյանի կողմից 2015թ-ի դեկտեմբերի 22-ին, ըստ էության, կրկին անգամ ներկայացվել է 2015թ-ի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկը, որում ընդամենը 2014թ-ի փոխարեն նշվել է 2015թ-ը: Այսինքն, թե 2015թ-ի դեկտեմբերի 19-ին և թե 2015թ-ի դեկտեմբերի 22-ին ներկայացված հաշվարկներում արտացոլված տվյալները (բացառությամբ տարեթվի) նույնական են: Նշված հանգամանքը հիմք է տալիս եզրակացության համար, որ 2015թ-ի դեկտեմբերի 19-ին, ըստ էության, ներկայացվել է 2015թ-ի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկը, որում, սակայն, տեղ գտած վրիպակի հետևանքով 2015թ-ի փոխարեն նշվել է 2014թ-ը: Ընդ որում հարկ է նշել նաև, որ Աբրահամ Մեղրիկյանը որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվել է 2015թ-ից, այսինքն՝ 2015թ-ի նոյեմբեր ամսվա համար ներկայացված հաշվարկը որևէ կերպ չէր կարող դիտվել որպես ներկայացված 2014թ-ի նոյեմբեր ամսվա համար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Աբրահամ Մեղրիկյանի կողմից սահմանված ժամկետում կատարվել է «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պարտավորությունը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 12.02.2016թ-ի թիվ 312741/02 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ